

6045

3kn(48.905) (25)

12-81

3046925
Ռ-80

Ռ. ՌՈՒԲԵՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի
ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

3046925
Ռ-81



ՄԵՏՅՐԱՏ 1928 ՅԵՐԵՎԱՆ

25 AUG 2005

ՀԿՈՒ (47.925)

Ը-ՅԼ

պր.

Ռ. ՌՈՒԲԵՆ

14 NOV 2005

1003
14919

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի
ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

3088

ՊԵՏՐԱՏ

1928



24 JUL 2013

6045

ՏՊԱՐԱՆ Հ Ե Ր Մ Ե Ս
 ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
 ՄԱՐՔՄԻ ՓՈՂ. № 29
 ԳՐԱՌԵՊ. 842բ
 ՏԻՐԱԺ 2000.
 ՊԵՏՏՐԱՏ 810

23792-60

Հայաստանի Կոմկուսակցության խնդիրներին մասին, նրա Կենտկոմի գործունեության ու ղեկավարության քննադատության առիթով, հարկադրված ենք այսօր կանգ առնել: Վերջերս այդ ղեկավարությունը յերկրորդ անգամ նորոգվեց: Թե ինչից է բղխել այդ նորոգման անհրաժեշտությունը, թե ինչու՞մն են կայացել ղեկավարության սխալները—այս հարցերին հարկավոր է պարզորոշ պատասխան տալ:

Այդ անհրաժեշտ է անել հոգուտ Հայաստանի Կոմկուսակցության և կոմսոմոլիստական մասսաների դաստիարակման, հոգուտ ինքնաքննադատության ու ինքնատուգման, ինչպես նաև յերկրով Հայաստանի Կոմկուսի և վողջ յերկրի կուսակցական ղեկավարությունն ուժեղացնելու անհրաժեշտությունից:

Հասկանալի յե ինքնըստինքյան, վոր ղեկավարության նորոգումը չի բղխում դատարկ պատճառներից: Հայաստանի ներկուսակցական պայքարը մեծ վտանգներ եր կրում իր մեջ. նա թուլացնում եր կուսակցական կազմակերպությունը, սնունդ եր մատակարարում մեր թշնամիներին: Բայց և միաժամանակ նա ուներ նաև իր դրական կողմերը. այդ պայքարում Հայաստանի մեր յերիտասարդ կազմակերպությունը դաստիարակվեց, աճեց ու կոփվեց:

Ինչո՞ւմն են կայացել Հայաստանի Կոմկուսակցության Կենտկոմի սխալները: Մկսնք իղիւղոգիական ֆրոնտից: Մի անգամ չի, վոր խոսվել է Հայաստանում իղիւղոգիական (գաղափարախոսական)

ճակատում մղվելիք պայքարի հարցի շուրջը: Մի անգամ չի, վոր մատնանշվել է կոմունիստական իդիոլոգիայի համար մղվող պայքարի թուլութունը, խուճկել այդ ճակատի աշխատանքների ղեկավարութայան սխալների ու թերութայունների մասին: Սակայն, չնայած բազմիցս տված դիրեկտիվներին ու ցուցմունքներին, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը վոչ միայն չի կատարել այդ ամենը, այլև ղեկավարութայան պրակտիկայում թուլ է տվել մի շարք կոպիտ սխալներ:

Վերցնենք թեկուզ սպեցիֆիզմի հարցը: Կուսակցութայան ղեկավարներն անցյալում կապեր են ունեցել այդ հոսանքի հետ: Նրանք դիրեկտիվներ են ստանում այդ ազգայնական հոսանքի ելութայունը մերկացնող բացատրական լայն կամպանիա մղելու անհրաժեշտութայան մասին: Թվում էր թե՛ նրանք կատաղի պայքարի պետք է ձեռնարկեյին, վորպեսզի իրենց իսկ ձեռքերով ունցիդիվի (վերադարձի) նոտաները խլացնեն, իրենց ձեռքերով հաշիվը մաքրեն ներանց հետ, վորոնք դեռ փորձում են սպեցիֆիզմի փթած դրոշմ նորից բարձրացնել (Դ. Անանուն և ուրիշները): Վոչ միայն հարկավոր էր Դ. Անանունին աքսորել, վորպես քաղաքականապես ֆուսսակար տարրի (մի ժամանակ այդ քաղաքական գծուծ անձնավորութայունը վատ չէր զգում իրեն Խորհրդային Հայաստանում), այլև հարկավոր էր իդիոլոգիական դաժան պայքար մղել անանունականութայան դեմ: Դա չկատարվեց: Վոչ մի մատչելի գրքույկ լույս չընծայվեց, բացատրական կամպանիա չմղվեց: Այդ գործում հարկ չեղած ակտիվութայուն հանդես չբերվեց: Վոր-

պես կուրյոզ կարելի է նշել, վոր կուսակցութայան անդամները սպեցիֆիզմը նույնացնում էյին «սպեց» «պացիֆիզմ» խոսքերի հետ, և նույնիսկ սպեցիֆիզմը սիֆիլիսի հետ էյին շփոթում (բնորոշ փաստ, վորը տեղի է ունեցել Հայաստանի գավառներից մեկում):

Դա սխալ է, թե՛ սխալ չի ղեկավարութայան ասպարիզում:

Դա անպայման կոպիտ սխալ է, վորովհետև նա տեղիք է տալիս կարծեւու, վոր կուսակցութայան ղեկավարներն, իրենք նախկին սպեցիֆիկներ լինելով, գիտակցաբար ընդդիմադրում են կուսակցութայան և Հայաստանի յերիտասարդութայան մեջ այդ անհրաժեշտ կամպանիայի անցկացման գործին:

Այդ սխալը վերապիսի ուրյեկտիվ պատճառներով կտրելի է արդարացնել: Յեւ վոչ մի: Հայաստանի Կենտկոմը պարտավոր էր կուսակցութայունը բացատրել սպեցիֆիզմի բնույթը. վորովհետև առանց դրան սպեցիֆիզմի մնացորդների դեմ պայքար մղել չէր կարելի: Կարելի է միթե պայքար մղել կոմունիստական իդիոլոգիային թշնամական մի հոսանքի դեմ, յեթե այդ թշնամական հոսանքի բնույթին անտեսելով լինելը կապում է կուսակցութայան ձեռները: Կարելի է միթե պայքար մղել անանունականութայան դեմ, յեթե կուսակցութայան մասնաները չեն իմանում թե ինչպիսի թշնամու հետ գործ ունեն իրենք:

Այդ բոլորն, արդյոք, ասում են թե բուն իսկ կուսակցութայան Կենտկոմում սպեցիֆիզմի ունցիդիվ գոյութայուն ունեւր: Իհարկէ վոչ. այդպիսի հետևութայունը ճիշտ չէր լինի: Սակայն, միանգամայն ակունհայտ է այն՝ վոր Հայաստանի Կենտկոմն այդ խնդրում

հանդես բերեց կուսակցութեանը ղեկավարելու իր լիակատար անոգու.թյունն ու անընդունակութիւնը:

Իր ժամանակին Լենինը սպեցիֆիկների մասին գրել է.

«Առանձնապես նախազգուշացնում եմ ձեզ «հայկական սոցիալ-դեմոկրատական ֆեդերացիայի» վերաբերմամբ: Յեթե դուք համաձայնվել եք, վոր նա մասնակցի կոնֆերենցիային, դրանով մի սրհասական սխալ եք կատարել, վորը հարկավոր է ինչ գնով ել լինի՝ ուղղել: Դրանք մի զույգ ու կենտ ժնեվյան կազմալուծիչներին, վորոնք, առանց վորեկ լուրջ կապ ունենալու Կովկասի հետ, այստեղ հրատարակում են ամենադատարկ ցնդաբանութիւններ: Այդ կազմակերպութիւնը բունդյան մի գործակալութիւն (կրիատոր) է, վորը հատկապես հորինված է կովկասյան բունդիզմի անուցման համար: Յեթե դուք թույլ տաք այդ տականքին մասնակցել ռուսական կոնֆերենցիային, այսինքն՝ Ռուսիայում աշխատող կազմակերպութիւնների կոնֆերենցիային, դուք սարսափելի կերպով կխայտառակվեք: Կովկասյան ընկերները բոլորը պիտի են այդ կազմալուծիչ գրականագիտների շայկային, (յես այդ շատերից եմ լսել և մենք շուտով ինչպիսի հարկն է կծվատենք նրանց «Պրոլետարում»): Դուք միայն տեղիք կտաք Կովկասի բողոքներին և (հաշտութեան ու) «միավորման» փոխարեն նոր խաւնակչութիւն ստեղծած կլինեք: Ասացեք խնդրեմ, այդ ինչպիսի կարելի չէ անտես առնել կովկասյան միութիւնը, Ռուսաստանում աշխատող բազմաթիւ ընկերներին և բարեկամանալ ժնեվյան ճահճի այդ տականքների հետ: Արտասովազին խնդրում եմ՝ միք անի դուք այդ (Լենինյան հավաքածու V):

Այս տողերն ամենալավագույն կերպով բնորոշում են սպեցիֆիզմը:

Վոր Խորհրդային Հայաստանում ևս սպեցիֆիզմի իդիոլոգիան յերկար ժամանակ իր համար բուն էր հյուսում, վոր Դ. Անանուն և կամպանիան լեզակ հնարավորութիւններ ունեյին Հայաստանում տարածելու սպեցիֆիկյան գարշահոտութիւններ,— այս ամենը դժբախտաբար ճիշտ է: Յեվ, յերբ դրա դեմ կուսակցութեան շարքերում դժգոհութիւն ծայր տվեց ու զարգացավ, դա անկասկած բայլը է իկյան, առողջ դժգոհութիւն էր:

Կենտկոմի սխալն այն էր, վոր նա խուլ մնաց այդ դժգոհութեան հանդեպ: Նա անընդունակ գտնվեց ըմբռնելու կուսակցութեան մասսաների առողջ քննադատութիւնը:

Կենտկոմը, փոխանակ իր ձեռքերով մինչև վերջը հիմնահատակ անելու սպեցիֆիզմը, կատարելու այդ վճռական ու համարձակ կերպով, սահմանափակվեց լուծթյան քաղաքականութեամբ: Իսկ յեթե քաղաքական ղեկավարը, այն ժամանակ, յերբ նրան ուզում են լսել, յերբ նա պետք է լսուի— լուում է,— այդպիսի քաղաքական ղեկավարն իր կոչմանը չի համապատասխանում: Այդ է Հայաստանի Կենտկոմի ղեկավարութեան առաջին սխալը, ճակատագրական սխալը:

Անցնենք դաշնակցական կուսակցութեան հանդեպ ունեցած վերաբերմունքի հարցին: Հարկավոր է միթե ապացուցել, վոր Հայաստանում կուսակցութեան ղեկավարներից պահանջվում է պարզ, վորոշակի և վոչ յերկմիտ վերաբերմունք դեպի կուսակցութեան քաղաքականութեան այդ կարևորագույն հարցը: Հար-

կազմը և միթե ապացուցել, վոր կուսակցական մասսային, յերիտասարդությանը, աշխատավորական մասսային պետք է ճիշտ կերպով կողմնորոշել այդ հարցում: Դա այբբենական ճշմարտությունն է: Ով ընդունակ չի այդ անել, նա չի կարող վոչ կուսակցություն, վոչ յերկիր ղեկավարել: Բնորոշ է, վոր Հայաստանում մինչև որս չի հրատարակվել դյուղացիների համար, բանվորների համար, մի մատչելի գրքույկ՝ ուղղված Դաշնակցության դեմ: Մինչդեռ Հայաստանի մի քանի ղեկավար աշխատողների շրջանում դիսկուսիայի յե յենթարկվում մի քանի տարի շարունակ Դաշնակցություն կուսակցության բնույթի հարցը:

Այդ պերմանենտ դիսկուսիան այն մասին՝ թե դաշնակիների կուսակցությունը բուրժուական է, թե՞ մանրբուրժուական, այն հետևանքն ունեցավ, վոր, խանգարեց կուսակցական մասսայի և յերիտասարդության ճիշտ կողմնորոշման գործին: Յեվ իսկապես, Դաշնակցության բնույթի հարցը մի հասարակ հարց չի: Ձե՞ վոր նրա հետ է կապված և այն հարցը՝ թե ինչպիսի վերաբերմունք պետք է ունենանք դեպի այդ կուսակցությունը: Հայաստանի Կենտկոմը չնկատեց այնպիսի մի «փոքրիկ» հարց, վոր գրական դիսկուսիան վաղուց քաղաքական դիսկուսիայի յե վերածվել: Իսկ միտք ունի՞ միթե կուսակցության քաղաքականության կարգինալ հարցի շուրջն անվերջ դիսկուսիա մղել: Յեթե Աշոտ Հովհաննիսյանին ցանկալի յե, և նա ժամանակ ունի արխիվները տակն ու վրա անել, պատմական հետախուզություններ կատարել նրա համար, վորպեսզի արդարացնի իր տեսակետը Դաշնակցության մանր-

բուրժուական լինելու մասին,— դա նրա անձնական գործն է: Բայց ի՞նչ բան ունի դրա հետ կուսակցությունը, վորը պահանջում է դրված հարցին պարզ ու վորոշակի պատասխան: Յեթե Աշոտ Հովհաննիսյանը և նրա նմանները կուսակցության քաղաքականության կարևորագույն հարցերում կարող են անվերջ շփոթության մեջ ընկնել, իսկ կուսակցությանը չի՞ կարելի շփոթության մեջ գցել, չի՞ կարելի շփոթության միջոցով դաստիարակել յերիտասարդությանը: Այդպես չի կարելի անել, վորովհետև Հայաստանի կոմկուսակցությունը շարունակ դաշնակիզմի և Դաշնակցության իդիոլոգիայի դեմ պայքարի մեջ է գտնվում: Թըշնամու դեմ սուր պայքար մղելու մոմենտին անվերջ վիճել այն մասին՝ թե, իսկապես ասած, թվ է այդ թըշնամին— դա նշանակում է չիմանալ ղեկավարել, չիմանալ մասսաներին դաստիարակել և կազմակերպել նըրանց պայքարի համար: Միանգամայն տկընհայտ է, վոր հանձինս դաշնակիների մենք ունենք մեր դասակարգային ամենավոխերիմ թշնամիների իդիոլոգներին: Ստեփան Ծահումյանը դաշնակիների մասին հետևյալն է ասել ու գրել.

«Այդ կուսակցությունը սխտեմատիկ կերպով խեղդում էր բողոքի ձայնը հայ պրոլետարիատի մեջ. ջանում էր ճնշել իր բնում ամեն մի պայքար հայ բուրժուազիայի դեմ, Կովկասում յերևան յեկած ամեն մի հեղափոխական շարժում և աշխատում էր դբաղեցնել բնակչությունը բացառապես մի Փանտաստիկ ու բախտախնդիր իդիոլոգի տաճկահայության ազատագրմամբ»:

«Բնական է, վոր հանձին «Դաշնակցություն» կու-

սակցութեան՝ կովկասահայ բուրժուազիան ունիւր իր հարազատ գավակը, իր լավագույն դաշնակիցը, իր շահերի լավագույն արտահայտիչն ու պաշտպանը, և դրա համար ել նա ամենայն կերպ—նյութապես ու բարոյապես—աջակցում եր այդ կուսակցութեանը»:

Այնուհետև՝

«Զարգացման հետագա ընթացքը վերջնականապես պախարակեց դաշնակցական կուսակցութեան ազգային իդեալները, մասսաների աչքին մերկացրեց նրա դասակարգային, բուրժուական եյությունը, ցույց տվեց «հայրենիք փրկողներին» իսկական դեմքը, և հենց դրանով Դաշնակցութեանը նորից յիշուեց արանցի առաջ կանգնեցրեց. կամ հետ մնալ մասսաներից, դառնալ նրանց բոլորովին խորթ և այդպիսով վարկաբեկել իրեն նրանց առաջ, կամ՝ նոր կերպարսնափոխում կատարել՝ դավաճանելով այն ամենին, ինչ վոր նա մինչ այդ ասել էր, ինչի համար պայքարել էր»:

Այնուհետև՝

«Բայց դադարել է նա, արդյոք, լինել բուրժուական, ազգային-քաղաքական, բնակցիոն կուսակցութեան, ինչպիսին եր նա 15 տարվա ընթացքում: Ավանդ. այդ կուսակցութեան գործունեյութեանը մեր աչքերի առաջն է. նա ներկայումս թերեւս ավելի բուրժուական է, նացիոնալիստական (ազգայնական) ու բնակցիոն, քան յերբևիցէ» (Ստեփան Շահումյանի հոդվածներն ու ճառերը. «Бакинский Рабочий» հրատարակութեանը, էջ 86, 89, 91):

Ստեփան Շահումյանի տեսակետը մեր կուսակցութեան տեսակետն է. Դա պարզ, վորոշակի, վոչ յիշուեց իմաստ տեսակետ է. Հայաստանի հենտկոմը, փոխանակ

այդ վորով դաստիարակելու մասսաներին, պայքարի մեջ կոմիտեու նրանց, անընդհատ դիսկուսիա մղելուց բացի շրջաբերական նամակով գավկոմներին հետևյալն է գրում:

«Դաշնակից մը, վոր պիտի հակահարձակուի փոխական մի գաղափարախոսութեան, կարող եւ վերջնականապես հաղթահարել միայն դասական կարգերի վոչնչացման պրոցեսում, հասարակական հարաբերութեանն երբ արմատական վերակազմութեան պրոցեսում»:

Իսկ կուսակցութեան ղեկավարներից մեկը նույն իսկ այն յիշրակացութեանը հանգեց, թե դաշնակից մը դա այնքան վորոշմի վրա գաղափարախոսութեանն է, վոր Հայաստանի կոմկուսակցութեանն այդ գաղափարախոսութեան դեմ «չի պայքարել, չի պայքարում և չի պայքարելու»:

Այն դատողութեանը՝ թե բայլընդինները, մարքսիստները դաշնակցական իդիոլոգիայի դեմ՝ նկատի ունենալով նրա վորոշմիութեանը՝ չպետք է պայքար մղեն, — այդ դատողութեանը, մանավանդ յերբ նա կուսակցութեան կազմակերպութեան ղեկավարի կողմից է հանդես բերվում, հազիվ թե «արժեքավոր» կարողանա լինել:

Մի կողմից. դաշնակներին մինչև սոցիալիզմը գոյութեան ունենալու մանդատ է տրվում, մյուս կողմից՝ թշնամին այն աստիճան է արժեքազուրկ համարվում, վոր առաջարկվում է գաղափարական պայքար չմղել նրա դեմ:

Կարելի՞ յի, արդյոք, այդպիսի դեպքում:

վրական համարել: Կարելի՞ յե մասսաներին անհիթեթու-
թյան միջոցով դաստիարակել և թշնամու դեմ պայքարելու ուղղութեամբ կոփել: Վերջապես, կարելի՞ յե, արդյոք, այդ կերպ պայքար մղել իդիոլոգիական ճակատում:

Քարոզել այնպիսի մի գաղափար՝ թե Դաշնակցութեանը միայն սոցիալիզմի որոք կհաղթահարվի, — դա մասսաների ճիշտ կողմնորոշման վճռական արգելումին և հավասարադոր, և դեռ ավելի վատը՝ թշնամական իդիոլոգիային սնունդ մատակարարելուն և հավասարադոր:

Թշնամու ուժերը պատկերացնել յեղածից ավելի պակաս, դա միևնույն և թե մեր պայքարի սուր զինքերը բթացնել: Սրանք ղեկավարութեան կոպիտ սխալներն են:

Հայաստանում՝ դաշնակների դեմ պայքարելու գործում մասսաներին կազմակերպել չկարողանալը, նրանց այդ պայքարի համար դաստիարակել չկարողանալը, դա նշանակում և առհասարակ վոչինչ չկարողանալ:

Այս ամենն, արդյոք, նշանակում և, վոր ղեկավարութեան գիծը ճշտ չեր: Իհարկե վոչ: Քաղաքական գիծն ընդհանուր առմամբ ճիշտ եր: Սակայն և այնպես, իդիոլոգիական ճակատում մի քանի տարի շարունակ կատարվել են չափազանց կոպիտ սխալներ, վորոնք իրենց զարգացումով կարող եյին ճիշտ գիծն ամբողջովին խորտակել: Հարկավոր եր իր ժամանակին նախազգուշացնել այդ անխուսափելի ընթացքից: Հայաստանում ստեղծված պայմաններում նախազգուշացման ամենալավագույն ուղին այդ ղեկա-

վարութեան թարմացման, նորոգման ուղին և: Վոչ վոք սխալներից չի ապահովագրված: Սխալվել կարելի յե: Սակայն, յերբ կուսակցութեան ղեկավարութեան մեջ մեկը մյուսի հետևից սխալներ են տեղի ունենում և այն ել կոպիտ սխալներ, այդ դեպքում միշտ հարկավոր և լուրջ կերպով խորհել և հանել այնպիսի վճիռներ, վորոնք խափանեյին կուսակցութեան քաղաքական ճիշտ գծի վերասերման վտանգը:

Մատնանշենք մի բնորոշ փաստ, վորը ցույց և տալին թե վորպիսի պատկեր գոյութեան ունեն իդիոլոգիական ճակատի ղեկավարութեան անպարիզում:

Կուսակցութեան Լենինականի գավկոմը հակադաշնակյան լուրջ կամպանիա յե սկսում: Կարծես թե այդ նախաձեռնութեանը հարկավոր եր պաշտպանել: Ընգհակառակն և կատարվում: գավկոմի նախաձեռնութեանը ճնշվում և: Հայաստանի կենտկոմը Լենինականի գավկոմին դիրեկտիվ և ուղարկում՝ կամպանիան չսկսել մինչև կենտկոմից թեղիսներ ստանալը: Անցնում և կես տարուց ավելի, վոչ մի թեղիս չի ուղարկվում և կամպանիան վիժում և: Հագիվ թե այդպիսի ղեկավարութեան կարող լինի նպաստել դաշնակների դեմ մղվող պայքարի տեմպի ուժեղացմանը: Բյուրոկրատական թեղիսագրումը մեղցնում և ամենորյա քաղաքական պրակտիկ աշխատանքի վոգին: Այս փաստը խիստ ապշեցուցիչ մի փաստ և: Հայաստանի կենտկոմն իհարկե ունեն իր ճիշտ գիծը: Բայց գիծը չպետք և գիծ մնա, այլ կենսագործվի կյանքում: Դիալեկտիկան սովորեցնում և բոլոր յերևույթների մեջ ճիշտ կապ գտնել, նա սովորեցնում և թեյորիայի ու պրակտիկայի միջև սերտ

կապ հաստատել: Մարքան ասիլ է, վոր, յեթե մտածողութեան արմատները պրակտիկ գործունեություն մեջ են, ապա ճշտութեան ստուգումը հնարավոր է միմիայն պրակտիկայի ոգնութեամբ: «Մարդն իր մտածողութեան ճշմարտութիւնը պրակտիկայով ցույց պետք է տա: Շատ հաճախ հարց են տալիս. Հայաստանի հենտկոմի քաղաքական գիծը ճիշտ եր արդյոք: Այն գիծն ընդհանուր առմամբ ճիշտ եր, սակայն Հայաստանի հենտկոմը գործնականի մեջ այնպիսի սխալներ թույլ տվեց, վորոնք խորտակման սպառնալիքի տակ եյին դնում այդ կուսակցութեան ճիշտ քաղաքական գիծը:

Իդիոլոգիական ճակատում հնարավոր չի հաջող կերպով պայքար մղել առանց կուսակցութեան ղեկավար որգանի շուրջը կուսակցական միաձուլյալ ակտիվի համախմբմանն ու կազմակերպմանը. հաջող պայքարել չի կարելի առանց այդ ճակատի համար աշխատողների կազմերի կազմակերպմանն ու պատրաստմանը:

Հայաստանի հենտկոմը չկարողացավ հարկ յեղած չափով կազմակերպել այդ կազմերը, ուժերի համապատասխան դասավորում կատարել. նա չկարողացավ նույնպես իր շուրջը համախմբել կուսակցական ակտիվին: Այդ տեսակետից, Հայաստանի հայտնի մայիսյան ապստամբութեանը նվիրված Ո. Դուրգարյանի հոդվածի պատմութիւնը շատ բնորոշ է:

Հայաստանի մայիսյան ապստամբութիւնը բայլչեկիյան լավագույն եջն է Հայաստանի կոմունիստական կազմակերպութիւնների պատմութեան մեջ: Մայիսյան ապստամբութեան միջոցով բայլչեկիյան յերթաասարդութեան կողմ դաստիարակվեց:

Այդ կազմի համար ապստամբութեան ցրտորոցը բայլչեկիյան լավագույն ցրտոցն էր: Ապստամբութեան ընթացքում ընկած ընկերների վոսկորների վրայով է Հայաստանում ձգվել ճանապարհը ղեկի խորհրդային ուժերը, Հայաստանի հենտկոմի շուրջը կազմակերպել, այլ վոչ թե հետ մղել բայլչեկիյան այդ կազմը, — այսպես պետք է դրված լիներ խնդիրը: Առանց դրան դժվար է համախմբել ղեկավար մարմնի շուրջը կուսակցական ակտիվին: Հայաստանի հենտկոմը վոչ միայն աշխատողների այդ կազմին չհամախմբեց իր շուրջը, այլ և հետ մղեց իրենից, գետեղելով իր որգանում առանց ծանոթութիւնների ընկ. Դուրգարյանի հոդվածը:

Ընկ. Դուրգարյանը, վոր մայիսյան ապստամբութեան շրջանում մենչեկի էր, իր վրա ծանրութիւն վերցրեց գրել այդ ապստամբութեան պատմութիւնը: Ավելի լավ կլիներ յեթե հենտկոմը մայիսյան ապստամբութեան հարցի մասին պատմութիւն գրել տար կամ դիսկուսիա բաց աներ վոչ թե նրանց ձեռքով, վորոնք ապստամբութեան շրջանում մենչեկի են յեղել: Ընկ. Դուրգարյանը արջի ծառայութիւն մատուցեց հենտկոմին: Նա փաստորեն վողբաց մայիսյան ապստամբութիւնը: Ավելին. նա իր «պատմութեան» մեջ բերեց այնպիսի փաստեր, վորոնք միայն կերակուր են մատակարարում մեր թշնամիներին և վորոնք սխալ ու շինծու դուրս յեկան:

Դուրգարյանի հոդվածը գետեղվում է առանց ծանոթութիւնների, դիսկուսիոն կարգով, իսկ հոդվածի պատմութեանը ուշացվում է: Կուսակցական կազմակերպութեան մեջ դժգոհութիւն է տիրում: Ապստամբութեան մեջ դժգոհութիւն է տիրում: Ապստամբութեան մեջ դժգոհութիւն է տիրում: Ապստամբութեան մեջ դժգոհութիւն է տիրում:

տամբուլթյան մասնակիցներն ու կազմակերպիչները—
բայլշեխիկյան յերիտասարդութեան լավագուշն կադրը-
վրդովված և կենտկոմի այդ դիրքից ու վարմուն-
քից: Կենտկոմը նորից շի ունկընդրում դժգոհութեան
ձայնին, ըստ վորում այս անգամ ևս դժգոհութեանը
բայլշեխիկյան և, որինական: Յեվ մի քանի ամիս հետո
միայն, յերբ արդեն դժգոհութեանը կուսակցական
լայն շրջաններ եր ընդգրկում, Հայաստանի կենտ-
կոմը վորոշում և:

«Ընդունել վոր մայիսյան ապստամբութեան այն
գնահատականը, վորը տվել և ընկ: Դուրգարյանը «Կո-
մունիստ» հանդիսում գետեղած իր հողվածում, ճիշտ
չի, բայլշեխիկյան չի, մենշեխիկյան լիկվիդատո-
րական և, նա չի համապատասխանում ընկ: Լուկաշի-
նի թեզիսներին տվյալ հարցի մասին, վորոնք ըն-
դունված են Հայաստանի Կոմկուսակցութեան 1-ին
համագումարի կողմից: Թեզիսներում ասված և:


«Այդ դեպքերը զանազան գնահատում են
ստանում մեր ընկերների կողմից: Վրոմանք այդ
ապստամբութեանը համարում են անժամանակ
մեր կուսակցութեանն արյունաքամ անող, մեր
կազմակերպութեանները քայքայող: Ուրիշները
գտնում են, վոր նա մեր կուսակցութեան կող-
մից հարկ յեղած չափով չի գլխավորվել ու դե-
կավարվել: Այժմ դժվար և այդ դեպքերին լիա-
կատար գնահատականը տալ, սակայն մի բան
պարզ և, վոր կոմունիստները պարտավոր ելին
գլխավորել տարերայնորին ապստամբված բան-
վորներին ու գյուղացիներին: Ճիշտ այնպես, ինչ-
պես Ռուսաստանում տեղի ունեցավ հուլիսյան որե-

րին, յերբ ապստամբութեանը վոչ թի Ռեկ բարձ-
րացրից, այլ մենք ուղղակի ստիպված ելինք
հաշվի նստել վաստի հետ և մեր մասնակցու-
թեամբ պետք և համապատասխան ուղղութեանը
տայինք շարժմանը, չկտրվիլինք մասսաներից:
Իհարկե, չեմ ուղղում սրանով այդ դեպքերի միջև
ամբողջական զուգահեռ անցկացրած լինել: Յես
լիովին ճիշտ եմ համարում մեր ընկերների տակ-
տիկան, վորոնք գլխավորեցին մասսաներին հե-
ղափոխականացնող շարժումը: Յես այդ ապստամ-
բութեանը մեր կուսակցութեան լավագուշն և՛ն
եմ համարում:

«Սխալ համարել այնպիսի խմբագրութեանը «Կո-
մունիստի» նույն համարում չի գետեղել համապա-
տասխան պատասխան—հողված ընկ: Դուրգարյանի
հողվածի դեմ» և այլն:

Ձեք վոր կուսակցութեան յուրաքանչյուր անդամն
իրավունք ունի հետևյալ հարցերը տալ: Ինչ՞նե համար
կենտկոմը բաց և թողնում վոչ բայլշեխիկյան, մենշե-
փիկյան-լիկվիդատորական հողված (կենտկոմի նախա-
գահութեան շատ անդամներ հողվածը կարդացել ելին):
Ինչ՞նե հողվածին վորեք ծանոթութեան չկցվեց: Ինչ՞նե
այնքան յերկար ձգձգվեց ընկ: Դուրգարյանի սխալը
խտրազանող սլատասխան—հողվածի տպագրումը: Ին-
չ՞նե համար կենտկոմը միայն այն ժամանակ արձա-
գանքից ընկ: Դուրգարյանի հողվածին և համապա-
տասխան գնահատական տվեց նրան, յերբ կոմունիստ-
ցութեան շարքերում, և մամ տվանք մայիսյան ապս-
տամբութեան մասնակիցների շարքերում: Այժմ
մեծ տնրավականութեան ատաջ յիկավ:

1003
149212
23492-60



Այս ամենն այն են ասում, վոր զեկավարության սխալը փոքրիկ սխալ չէր: Դա վոչ միայն իղիւղողականն՝ այլ և կազմակերպչական սխալ էր, քանի վոր Կենտկոմը կուսակցական ակտիվի մեծ կազր հետ մըղեց իրենից:

Այս բոլոր թերացումները և սխալներն իչէք դարձրին նույնիսկ այն նվաճումները, վոր ունեցիլ էր Կենտկոմն իղիւղողական ճակատում կատարած իր աշխատանքում:

Սոցյոր թերացումներից բացի, կային և վոչ պակաս ուրիշներ, վորոնք վկայում էյին իղիւղողական ճակատում կատարվող աշխատանքի ընդհանուր թուլության մասին: Կուսակցական ազդեցությունը համալսարանում վերին ստտիճանի թույլ էր: Դեկավարության թուլությունն արտահայտվեց նաև մամուլի ճակատում: Կուսակցական կազմակերպությունը կողմնորոշված չէր ինտելիգենցիայի հանդէպ ունենալիք վերաբերմունքի հարցերում:

Կուսակցական դաստիարակության վողջ սխտեման չէր շոշափում կենսական, էյական հարցեր, չէր համապատասխանում մաստաների պահանջներին: Բանվորը և գյուղացին մի շարք տարիներ ընթացքում չունեյին իրենց անհրաժեշտ մատչելի գրականությունը: Պատահական չե և այն, վոր մի քանի տարի շարունակ յերիտասարգության շարքերում յուրջ գողափարային տատանումներ կային: Մասունները հարկ յեղած չափով չկոփվեցին նոցիտնալիզմի և շովինիզմի դեմ պայքար մղելու գործում: Այս բոլոր սխալները չէյին կարող առաջ չբերել դժգոհության տարրեր:

Հայաստանի Կենտկոմը դորձեց և վոչ պակաս չափով կազմակերպչական սխալներ:

Կարող են հարց տալ. հարկավո՞ր է, արդյոք, նըրանց մասին գրել և, ընդհանրապես, հարկավո՞ր է, արդյոք, քննադատության յենթարկել Կենտկոմի գործունեյությունը, յերբ վոր զեկավարությունն արդեն փոխված է:

Մեր կարծիքով, դա անհրաժեշտ է կատարել նախ՝ ինքնաքննադատության տեսակետից: յերկրորդ՝ գործված սխալների հաշվառման տեսակետից (հետագայում նրանց կրկնումից խուսափելու համար) և յերրորդ՝ այդ անհրաժեշտ է կատարել, վորպեսզի ամբողջ կուսակցությունն ու մասսաները նույնպես խմանան մեր բացերի մասին, կարողանան ճիշտ վորակում տալ նրանց և ընրունեն զեկավարության փոփոխման պատճառը:

Լենինը դեռ 1902 թվին գրել է.

«Վոչ մի քաղաքական գործիչ իր կարիերան առանց այս կամ այն պարտությունների չի անցկացրիլ: Յեվ յեթե մենք լուրջ կերպով խոսում ենք մասսաների վրա ազդելու մասին, մասսաների ռարի կամքը՝ նվաճելու մասին, այն ժամանակ՝ բոլոր ուժերով պետք է ձգտենք, վորպեսզի այդ պարտությունները ծածկված չմնան խմբակների ու խմբերի ապականված մթնոլորտում, վորպեսզի նրանք բոլորի դատին արժանանան: Առաջին հայացքից այդ անհարմար կթվա այս կամ այն զեկավարին, յերբեմն «վիրավորական» կերևա, — բայց մենք անհարմարության այդ կեղծ զգացմունքը պետք է հաղթահարենք:

Այդ մեր պարտքն է կուսակցության առաջ, բանվոր դասակարգի առաջ: Մենք դրանով, և միմիայն դրանով, կուսակցական ազդեցիկ աշխատողների վողջ

մասնային (այլ վոչ թե պատահականորեն ընտրած խմբին կամ խմբակին) հնարավորություն ենք տալիս ճանաչել իրենց առաջնորդներին և նրանցից յուր աքանջյուրին իր արժանի տեղը հասկացնել: Միայն լայն հրապարակումը կուզի միակողմանի, քմահաճ ուղղագիծ շեղումները, միայն նա յի վոր խմբակները յերբեմն անհեթեթ ու ծիծաղելի տարածայնությունները կուսակցական ինքնադատիարակության ոգտակար ու անհրաժեշտ մատերիալի կվերածի:

Ընչոյ, ավելի լույս: Մեզ հարկավոր է հսկայական կոնցերտ, մեզ հարկավոր է փորձ մշակել, վոր պետքի այդ կոնցերտում ճիշտ բաշխել զիրերը, վոր օղեսոքի մեկին սենտիմենտալ ջութակ տալ, միուսին՝ մոլեգին կոնտրաբաս, յերրորդին՝ դիրիժորական փայտիկը հանձնել: Թող վերջապես կենսագործվի հեղինակի հիանալի կոչը՝ հյուրասիրելու կուսակցական մամուլի եջերում և բոլոր կուսակցական հրատարակություններում բոլորի կարծիքը: Թող բոլորը և ամենմեկը մեր «վեճերի ու անհեթեթությունների» մասին դատեն վորևէ «նոտայով», վոր վումանց կարծիքով վերցված է սուտ, ուրիշների կարծիքով՝ կեղծ, յերրորդների կարծիքով՝ զջլած: Մի շարք նման բացարձակ քննադատություններով միայն կարող է մըշակվել զեկավարների իրապես հաջողակ մի կոլլեգիա: Միայն այդպիսի պայմաններում բանվորները կդրվեն մի գրության մեջ, վորը չի թողնի նրանց դադարելու մեզ ըմբռնելու: Միայն այն ժամանակ մեր «ըշտարն» իսկապես հենված կլինի բանակի բարի և փուտակցական կամքի վրա. մի բանակի, վորը կդնա իր

շտաբի հետեից և միաժամանակ ուղղություն կտա իր շտաբին» (1903 թ. «Искра» նոյեմբերի 25 -նամակ խմբագրության):

Այս նշանակալից տողերը միթե՞ չպետք է զեկավարող լինեն մեզ համար նաև այսօր:

Կուսակցությունը պետք է իմանա զեկավարության սխալները, վորովհետև միայն այդ զեկպրում կուսակցության մասնայական վերահսկողությունը կարող է նախազգուշացնել և հետագայում այդ սխալները կրկնելուց:

ՀԱՄԿԿ (ը) 15-րդ համագումարից սկսած՝ կուսակցությունն ամեն օր բայլչիկյան համառությամբ մատնանշում է ինքնաքննադատության անհրաժեշտությունը, մասնաների լայնածավալ քննադատության անհրաժեշտությունը: Կուսակցությունը շարունակ խոսում է պրոլետարական դեմոկրատիայի մասին, գործնականորեն կյանքում կիրառվող ներկուսակցական դեմոկրատիայի անհրաժեշտության մասին:

Մի շարք ցայտուն օրինակներ ևս բերենք, վորոնք բնորոշում են Հայաստանի Կենտկոմի զեկավարության բացերը: Յերևանի կազմակերպության բջիջները ցանկանում են Հայաստանի Կենտկոմի պրենումի արդյունքների մասին զեկուցում լսել: Այդ զեկուցումները վոչ միայն չեն արվում, այլ և արգելվում են: Ինչո՞ւ: Ինչո՞ւ համար պետք է մերժել բջիջին Կենտկոմի պրենումի մասին զեկուցում անել, յեթե նրան հետաքրքրում է տվյալ հարցը: Չե՞ վոր զըրանով խայտավում է ներկուսակցական դեմոկրատիայի ապրրական պահանջը: Բջիջն իր զեկավարներին լսել է ուզում, իսկ զեկավարները բջիջ չեն դնում:

ինչքան համար: Բանից դուրս ե գալիս, վոր քը ջի ջի ն հետաքրքրում ե վոչ թի հենտկոմի պըլենումի հարցը, այլ բուլբուլի ն կողմնակի հարցեր, վորոնք կապ ունեն ներկուսակցական դրության հետ:

Այս շմեցուցիչ արգումենտացիան եր, վոր հիմք ե ծառայել ղեկուցումների արգելմանը: Կարելի՞ յե, արդոք, ալիլի անհեթեթ ու բյուրոկրատիզմով ամբողջովին համակված մի արգումենտացիա մտածել: Յի՞րբ և վերտեղ մեր բայլչեկյան կուսակցության տարգիցիաներում տիրապետել են նման արգումենտներ: Հետաքրքիրն այն ե, վոր այդպես ել բլիշներում ղեկուցումները չտրվեցին, բլիշները չարժանացան, վորպեսզի ղեկավարները գան իրենց մոտ և պատասխանեն իրենց հուզող հարցերին:

Այդ ամենը չափից դուրս բնորոշ ե: Դա՛ կուսակցական մասսաներից բյուրոկրատական կտրվածության մի փայլուն որինակ ե: Իհարկե, պատահական չե, վոր կուսակցության ղեկավարները խուլ մնացին կուսակցական մասսաների պահանջների հանդեպ և չնկատեցին այն աճող անբավականությունը, վորը հետագայում Յերևանի կազմակերպության մի շարք բլիշներում բացարձակ յերույթի վերածվեց ընդդեմ Կենտկոմի ղեկավարությանը: Կենտկոմն այնքան եր կտրվել մասսաներից, վոր նույն իսկ այն ժամանակ, յերբ այդ բլիշները բացահայտ կերպով դուրս յեկան նրա ղեկավարության գեմ, նա դարձյալ չեք և այբը ջի ջի ներում: Այդ թերևս մեր կուսակցության մեջ մի անլսելի որինակ ե: Կենտկոմը, փոխանակ բը-

ջիջ գնալու, վերահամոզելու նրան, կամ վերջապես ստիպելու իրեն յինթարկվել, հասնոյս չգալով բլիշում, չլսելով նրան, չխոսելով կուսակցության անդամներին հետ, վճիռ ե կայացնում բլիշներին կազմալուծիչ յերույթներին մասին: Կուսակցության Յերևանի կոմիտեն Կենտկոմից հետևյալ դիրեկտիվը ե ստանում:

«Միաժամանակ առաջարկել Յերևանի կոմիտեյին ձեռք առնել միջոցներ՝ վերջ տալու կազմալուծիչ յերույթներին, յերևան հանելով այդ յերույթների կազմակերպիչներին և նրանց հարցը ԿՎՀ քննությանը հանձնելով»:

Այդ իմաստուն վճիռը հաղիվ թե կարողանար կազմակերպությանը բավարարել:

Կենտկոմը բլիշներում չերևաց այն ժամանակ, յերբ նրանք ցանկանում եյին իրենց հետաքրքրող հարցերին պատասխան ստանալ: Կենտկոմը բլիշներում չերևաց և այն ժամանակ, յերբ վոր նրանք բացարձակորեն ղեկավարության ղեմը դուրս յեկան: Յեվ նա սահմանափակվեց միայն դիրեկտիվ տալով Եյերևան հանելու յերույթների կազմակերպիչներին և նրանց գործերը հանձնելու ԿՎ Հանձնաժողովին:

Սակայն, ինչի՞ համար հարկավոր ե Եյերևան հանելու և ԿՎՀ հանձնելու: Ըստ յերևույթին, նրա համար՝ վոր յերույթ ունեցողները քննադատում են Կենտկոմի ղեկավարությունը: Իսկ միթե չի կարելի ղեկավարությունը քննադատել: Այդ միթե արգելված ե կուսակցության մեջ: Իհարկե, վատ ե, վոր, առանց Կենտկոմի բացատրությունները լսելու, բանաձևեր ընդունվեցին: Այդ բանը նորմալ համարել չի կարելի: Սակայն, ել

ինչպէս նորմալ շրջանակի մեջ պարփակել քննադատությունը, յիշել պահանջն անտես և առնվում և հենտկոմի անդամները չեն յերևում բջիջում, իսկ յիշք մյուս կողմից՝ Յերևանի հոմիտեյից ստացվում և արգելումն այն խիստ «իմաստալից» արգումենտացիայով, վորը վերևում մենք մեջ բերինք:

Միանգամայն բացահայտ է, վոր կուսակցական կազմակերպությունն այդպես դեկավարել չի կարելի: Կուսակցական բջիջներից այդպես կտրվելն անթույլատրելի յե: Ներկուսակցական դեմոկրատիայի հիմունքների այդպիսի ազավազումն անթույլատրելի յև: Իդիոլոգիական և կազմակերպչական սխալների բերված որինակները, կարծես թե, բավական են: Մենք կանգ առանք միայն ամենից ավելի բնորոշ փաստերի վրա: Այդ սխալները բնորոշում են դեկավարությունը:

Ներկուսակցական պայքարի ստեղծած պայմաններում այդ սխալները ճակատագրական դարձան:

Մի քանի խոսք ես անհրաժեշտ ես ասել ներկուսակցական պայքարի մասին. ավելի ճիշտ՝ այդ պայքարի բնույթի մասին: Յեթե մի կողմ թողնելու լինենք այն բոլորը, ինչ վոր անձնական է, կողմնակի (ամեն մի ներկուսակցական պայքարի այդ անխուսափելի ուղեկիցները) հենտկոմի դեմ պայքարող խմբակը, հենվելով Հայաս. հոմկուսակցության մի մասի վրա, և, զլիավորապես, Յերևանի կազմակերպության վրա, արմատապես խնդիր դրեց ուղղելու այն սխալները և բացելը, վորոնք հենտկոմի դեկավարության մեջ արդեն բավական մեծ ստաժ ունեյին: Պայքարող կողմը պահանջեց իդիոլոգիական ճակատում լիակատար դոր-

ծադրության մեջ դնել պայքարի մեքենան (պայքար սպեցիֆիզմի, դաշնակիզմի, ազգայնականության դեմ, ինտելիգենցիայի մի մասի սմենովելսովյան տրամադրությունների դեմ և այլն): Այդ պայքարը մի այլ քաղաքական կուսակցական գծի համար չեք մղվում (և՛ հենտկոմը, և՛ նրա դեմ պայքարող խմբակը միասին դեմ եյին տրոցկիստներին): Այդ մի պայքար եր գծի ուղղման համար. պայքար նրա համար, վորպեսզի բայլը կիկյան ճիշտ գիծը չխորտակվի: Իսկ գոյություն ունե՞ր, արդյոք, այդպիսի վտանգ: Անկասկած գոյություն ունե՞ր: Հայաստանի հենտկոմի սխալների մասին, կազմակերպչական և իդիոլոգիական սխալների մասին մեր բերած փաստերը հաստատում են այդ հանգամանքը:

Ընկ. Լենինը 1913 թվին գրել է.

«հենտրոնը վորպեսզի կարողանա վոչ միայն խորհուրդ տալ, համոզել, վիճել (ինչպես արվում եր մինչև այժմ), այլև իրապես որկեստրի դիրեժորը հանդիսանալ, վորպեսզի ճշտությամբ հայտնի լինի թե ով, վորտեղ և ինչպիսի ջութակ է վարում, վորտեղ և ինչպես այդպիսի գործիքին վարժվել և վարժվում է. ով, վորտեղ և ինչ պատճառով կեղծ ձայներ է բարձրացնում (յերբ յերաժշտությունը սկսում է ականջ ծվատել), և ում, ինչպես և վորտեղ հարկավոր է տեղափոխել դիսսոնանսն (աններդաշնակությունը) ուղղելու համար և այլն» (1913 թ. Նամակ ընկերներին մեր կազմ. խնդիրների մասին, հատոր IV, էջ 172):

Հայաստանի հենտկոմի իդիոլոգիական ու կազմակերպչական սխալների յերաժշտությունը «սկսեց ականջ ծվատել» և աններդաշնակության ուղղման

համար հարկավոր եր Հայաստանի Կոմկուսակցութեան ղեկավարութիւնը թարմացնել ու նորոգել:

Միւսնք են համառոտակի կերպով Հայաստանի Կենտկոմի սխալները և նրա կազմի նորոգման պատճառները:

Մրա հետ կապված՝ վորոնք են այն խնդիրները, վոր ծառանում են Հայաստանի Կոմկուսակցութեան առաջ:

Առաջին հերթին անհրաժեշտ է վերացնել այն կորովածութիւնը, վորը գոյացել եր մի կողմից՝ կուսակցական ղեկավարող որգանի և մյուս կողմից՝ կուսակցական ակտիվի ու կուսակցական մասսայի միջև: Կուսակցական մասսային հարկավոր է կուսակցութեան քաղաքականութեան և պրակտիկայի բոլոր կարևորագույն հարցերի քննութեան գործին գրավել: Յեւ մի ամենից առաջ նրանց պետք է անտեսական հարցերի քննութեան գործին գրավել: Հայաստանի քայքայված ժողովրդական անտեսութիւնը վերականգնելու աշխատանքների բուն շրջանը, — վորի ընթացքում տարի-րայնութիւնը գերիշխում եր կազմակերպվածութեանն ու ծրագրին, — մեր հեռու թողնելնք: Խորհրդային Հայաստանն իր անտեսական զարգացման հեռու շրջանը թեկադրեց: Հայաստանում նույնպես, ինչպես Խորհրդային յերկրի այլ վայրերում, ժողովրդական անտեսութեան շինարարութեան մեջ պակաս չեն յեղել բացերը: Զարգացման նոր շրջանը, ԽՍՀՄ անտեսութեան ռեկոնստրուկցիայի (վերակազմութեան) շրջանը անտեսութեան ղեկավարման ավելի մեծ պահանջ է առաջադրում: Իսկ այսօր անտեսութեանը ղեկավարել հնարավոր չի, առանց այդ գործին գրավելու բան-

վորներին ու գյուղացիներին և առաջին հերթին՝ կուսակցական կազմակերպութեանը: Առանց աշխատավորական լայն մասսաների ստեղծագործական նախաձեռնութեան ծավալման, առանց շինարարութեան պրակտիկ խնդիրների ինքնաքննադատութեան, առանց ներքինից մասսայական քննադատութեան կազմակերպելու յերբեք չի կարելի ճիշտ ղեկավարել: Զի կարելի ասել, վոր Հայաստանի Կոմկուսակցութեանը և նրա առանձին կազմակերպութիւնները գրավված եյին շինարարութեան պրակտիկ հարցերի քննութեան գործով, չի կարելի ասել, վոր Հայաստանի անտեսութեանը կառուցվում եր ինքնաքննադատութեան հիման վրա: Մինչև այժմ, իհարկէ, կազմակերպված չի յեղել (ինչպես և ամենուրեք) մասսայական ինքնաքննադատութեան ներքինից: Ընդհակառակը, Հայաստանում մասնագետի հողվածը քննադատելու համար՝ հալածանքի յենթարկելու բնորոշ դեպք է տեղի ունեցել: Հալածանք՝ Կենտկոմի նախագահութեան անդամի կողմից կոմսոմոլիստի դեմ: Այդ հալածանքի փաստը մեր կուսակցական հասարակայնութեան սեփականութիւնն է դարձել և ստացել իր համապատասխան գնահատութիւնը:

Հարկավոր է այնպես կազմակերպել գործը, վորպեսզի մասսան ակտիվ մասնակցութեան ունենա՝ վոչ թէ միայն բանաձևերի ընդունման մեջ, այլ և իրականում՝ ժողովրդական անտեսութեան շինարարութեան մեջ:

Սկսած գյուղի շինարարութեան կոնկրետ հարցերից՝ մինչև նոր կառուցումների վոճը — այդ ամենը պետք է մասսայական կոլլեկտիվ քննադատութեան

յենթարկվեն: Ի դեպ՝ մի քանի խոսք այսպես կոչված
 «ազգային վոճի» մասին: Անկասկած, շինարարութեան
 այդ կողմը համարյա ամբողջովին մասնագետների
 ձեռքին և գտնվում, վորոնք նոր կառուցումները միջ-
 նադարյան տաճարների յեն վերածում, յենթադրելով
 վոր «ազգային վոճով» են կառուցում: «Ազգային»
 կրեաների գոյ (այդ ժամանակ) անանձին որինակներ չենք
 բերելու: Միայն մատնանշենք, վոր անհրաժեշտ և շի-
 նարարութեան այդ բնագավառը կուսակցութեան
 վերահսկողութեան տակ գնել: Այդ վերահսկողութեանն
 անհրաժեշտ և վոչ միայն իդիոլոգիայի տեսակետից,
 այլև պրակտիկ—կենցաղային տեսակետից: Յերբ վոր
 բանվորական աներում մեծ լուսամուտների փոխա-
 րեն շատ փոքրիկ լուսամուտներ են կառուցում—միջ-
 նադարյան յեկեղեցու վոճի համաձայն, բանվորն անի-
 ծում և «ազգային» վոճը և պահանջում և շինարար-
 ութեան մեջ կիրառել մեր որերի գիտութեան ու
 տեխնիկայի նվաճումները, և վոչ թե միջին դարերի
 նվաճումները: Անհրաժեշտ և ինտելիգենցիային առա-
 վելագույն չափով մեր սոցիալիստական շինարարու-
 թեան գործին գրավել, սակայն նրա աշխատանքը
 մեր ամենորյա վերահսկողութեան տակ պետք և
 գտնվի: Այդ առանձնապես անհրաժեշտ և Հայաստանի
 համար, վորտեղ ինտելիգենցիան քաղաքական կողմ-
 նորոշման ու դեպի պրոլետարական դիկտատուրայի
 ուժեղ ունենալիք վերաբերմունքի իմաստով դեռ
 բավականաչափ շերտավորման չի յենթարկվել:

Կուսակցութեան ղեկավարող մարմինները պետք
 և իրենց շուրջը, իրենց ամենորյա աշխատանքի շուրջը
 համախմբեն ու կազմակերպեն միաձույլ կուսակցա-
 կան ակաիվ:

Հայաստանի կուսակցական կազմակերպութեան
 ներում պետք և լայն կամպանիա մղել սոցիալիստա-
 կան շինարարութեան հերթական ինդիքների շուրջը,
 վերջիններս վրա կենտրոնացնել կուսակցութեան
 ուշադրութեանը: Իրաժամանակ հաշվի առնելով անց-
 յալում գործված սխալներն ու բացերը:

Ներկուսակցական դեմոկրատիա, ինքնաքննադա-
 տութեան, մասսաների քննադատութեանը,— ահա այն
 ամենը պետք և բայլլեիկյան համառութեամբ կիրառ-
 վեն: Նախկին ղեկավարութեան կազմակերպչական
 սխալները պետք և վճռականապես ուղղվեն: Յեվ մի-
 չև հիմա յել կան տնային կոմունիստներ, վորոնք
 լրջորեն կարծում են թե՛ ներկուսակցական դեմո-
 կրատիան, ինքնաքննադատութեանը, լայն մասսայա-
 կան քննադատութեան ներքեից լողունգը,— այդ բո-
 լորը միայն դիպրոմատիական խոսակցութեաններ
 են, վորոնցով ժամանակավորապես բավարարվում են
 մասսաների պահանջները: Այդ իր բնույթով ար-
 խի-բյուրոկրատական, հակակոմունիստական, հա-
 կապրոլետարական տեսակետը կարող են բաժանել
 միայն այն եկոմունիստները, վորոնք լուրջ կերպով
 կտրված են և՛ կուսակցութեանից և՛ բանվորական
 մասսայից: Ինքնաքննադատութեան անհրաժեշտու-
 թեան հարցը դեռ հազիվ դրած՝ և ահա արդեն մեր
 հաջող աշխատանքի այդ անհրաժեշտ պայմանին քննա-
 դատներ են ձարվում:

Ինքնաքննադատութեան անհրաժեշտութեանը,
 կարելի յե ասել, մեր կուսակցական կազմակերպու-
 թեանները յուրացնում են արդեն: Նույնիսկ վոչ
 միայն նրանք, այլև բանվորական լայն մասսաները:

Մոցիալիստական շինարարութեան աշխատանքի վողջ ընթացքն և հրամայական դարձնում ինքնաքննադատութեան անհրաժեշտութիւնը: Զի կարելի չնկատել, վոր ինքնաքննադատութիւնն արդեն իր դրական արդյունքներն և տալիս: Միայն հարկավոր և ավելի ծավալել ինքնաքննադատութիւնը: Հարկավոր և ավելի լավ համախմբել նրա շուրջը բանվորներին, առաջին հերթին՝ բանվորական ակտիվին, գյուղացիական ակտիվին՝ գլուղում և, իհարկե, մեր վողջ կուսակցութեանը՝ սկսած շարքային կուսակցականից, մինչև բարձրագույն ղեկավարող կուսորգանները:

Այդ ուղղութեամբ վորոշ դրական աշխատանք կատարում և նաև պարբերական մամուլը: «Ով ուզում և լինի» լողունգն արդեն իր կոնկրետ լուծումն և ստանում: Սակայն, ինքնաքննադատութեան ծավալվող ալիքը ընդդիմադրութեան և հանդիպում: Ընդհանրապես, արդյոք, հարկավոր և ինքնաքննադատութիւն: Յեթե հարկավոր և, ինչպիսի՞ պրապորցիայով (հարաբերութեամբ) և ի՞նչ չափով: Նպատակահարմար և, արդյոք, ազատ արձակել ներքևի ինքնաքննադատութեան տարրերը: Թույլատրելի՞ յե, արդյոք, մեր մամուլի ելիբում վարկարկել պատասխանատու աշխատողներին: Ինքնաքննադատութիւնը զենք չի՞ ծառայում, արդյոք, մեր թշնամիների ձեռքին:

Այս բոլոր հարցերը քննութեան են առնվում, փորձեր արվում լուրջ կերպով քննադատելու ինքնաքննադատութիւնը:

Այդ տրամադրութիւններն, իհարկե, պատահական չեն և վորոշ չափով «որինաչափ» են, վորովհետև ինքնաքննադատութիւնը, և լայն կերպով՝ ծավալվող քննադատութիւնը ներքևից առանձնուպես, վրոմանց

հուզում և, անհանգստացնում և, ստիպում և խորհել: Լրացուցիչ հոգս և յերևան զալիս:

Իհարկե, ճավելի լավ և՛ հանգիստ նստել, մասաների վերահսկողութեան տակ դժնվելու հոգս չքաշել:

Այդ տրամադրութիւնները — ինքնաքննադատութիւնն այդ կերպ քննադատող մարդկանց տրամադրութիւններն — անկասկած բյուրոկրատի տրամադրութիւններն են արտացոլում: Նրանց տրամադրութիւններն են արտացոլում, ովքեր քիչ չեն ծնել բյուրոկրատական աղավաղման փաստեր, ամեն կերպ շրջափակելով իրենց մասսաների վերահսկողութիւնից:

Այդ տրամադրութիւնները հանդես են բերում նաև փափկամորթ մարդիկ, վորոնք անընդունակ են հասկանալու, վոր հասարակական շահը պահանջում և կախ տալ այս կամ այն մարդուն, յի՞թե նա բյուրոկրատիզմի մեջ և թաղվել, յի՞թե նա ֆուսսակար գործ և կատարում:

Մեր թշնամիները կարող են, արդյոք, մեր դժժան ինքնաքննադատութիւնն ոգտագործել: Իհարկե, կալող են: Մեր թշնամիներն, ի հարկե, մեծ ուշադրութեամբ հետևում են մեր խորհրդային իրականութեան բացասական կողմերին:

Մեր թշնամիներն աշխատում են հավաքել մեծ թիրուխներին վերաբերող փաստեր, վորպեսզի քմահաճորեն ընդհանրացնելով դրանք, ճգնեն ցույց տալ թե ամբողջ խորհրդային սիստեմն անպետք և: Այս ամենը ճիշտ և, բայց այդ նշանակում և, մի՞թե, վոր մենք պետք և ինքնաքննադատութիւնից հրաժարվենք: Վի՛չ, իհարկե, այդ չի նշանակում, վոր անհրաժեշտ և հրաժարվել ինքնաքննադատութիւնից:

Չէ վոր անկախ նրանից, թե մենք կզբաղվենք կամ չենք զբաղվի ինքնաքննադատությամբ, մեր թշնամիները չեն հաշտվի յերբեք խորհրդային սիստեմի հետ: Նրանք միշտ կգտնեն իրենց դասակարգային արգումենտները, վորպեսզի կեղտաջուր նետեն սոցիալիզմ կառուցող բանակին:

Ինքնաքննադատությունը մեզանում իր բնույթով չափազանց դրական մի ֆակտոր (գործոն) ե: Ինքնաքննադատությունը մեզ հարկավոր ե ակտիվ պայքար մղելու համար բյուրոկրատական խոցերի դեմ, մեր բոլոր տեսակի բացերի դեմ: Ինքնաքննադատության այդ դրական դերն առանձնապես անհրաժեշտ ե դառնում մանավանդ այսօր, յերբ մենք թեմակոխել ենք մեր սոցիալիստական ժողովրդական տնտեսության նոր շրջանը: Ինքնաքննադատությունը նպատակ ունի մեր բացերը վերացնել:

Ի հարկե, ինքնաքննադատություն կա, ինքնաքննադատություն ել կա: Կարող ե լինել նաև այնպիսի ինքնաքննադատություն, վորն այդ դրական խնդիրը չի հետապնդի: Այդպիսի ինքնաքննադատությունը կարող ե նպատակ դնել մեր խորհրդային կարգերի քայքայումը: Ի հարկե, կլինեն այնպիսի տարրեր, վորոնք կուզենան այդ գենքն ոգտագործել իրենց հակապրոլետարական, հակախորհրդային նպատակների համար: Այդպիսի ինքնաքննադատություն կարող են հանդես բերել նաև նրանք, վորոնք ընդհանրացնելով մեր թերությունները կքննադատեն մեր կարգերի վողջ սիստեմը: Մեր խնդիրն ե՝ կարողանալ ամեն կերպ, մերկացնել, դիմակադերծ անել այդպիսի ինքնաքննադատությունը:

Այդ դժվար գործ չե. բանվորական լայն մասսաներին ինքնաքննադատության շուրջը համախմբել կարողանալը, մասսաների ամենորյա վերահսկողություն կազմակերպել զիտենալը — շատ ավելի դժվար ե: Վերցնենք թեկուզ մեր արտադրական խորհրդակցությունները: Մի՞թե նրանց աշխատանքն ընթանում ե ինքնաքննադատության հիմունքներով: Մի՞թե մեզանում բանվորների քննադատությունը հարկ յեղած բարձրության վրա յե դրված: Մի՞թե այժմ սկսել են արդեն ինչպես հարկն ե՝ բանվորների քննադատությանն ականջ դնել:

Վերցնենք մեր մասսայական աշխատանքի վողջ սիստեմը: Մի՞թե մենք կարողացել ենք վերակառուցել այն ինքնաքննադատության հիմունքներով: Մի՞թե ներկուակցական դեմոկրատիայի լողունգը լայն կերպով կիրառվում ե թեկուզ հէնց մեր կուսակցական ստորին կազմակերպություններում:

Մենք ինքնաքննադատությունը դեռ ինչպես հարկն ե չենք կարողացել կազմակերպել և ահա նրան ընդդիմադրությունն ցույց տալու փաստը մեր աչքերի առաջն ե: Այդ ընդդիմադրությունը պետք ե կուսակցության ղեկավար մարմինները, և առաջին հերթին՝ բանվորական ամենալայն զանգվածները, վճռական հակահարված հասցնեն:

Անհրաժեշտ ե ավելի համարձակորեն զարկ տալ ինքնաքննադատությանը, ավելի համարձակ մերկացնել նրա տաքարյուն քննադատներին: Վճռական պայքար պետք ե մղել քաղքենիական տրամադրությունների դեմ, առանձին փափկամորթ մարդկանց քրիստոնեական բարոյախոսության դեմ:

Աշխատավորութեան հասարակական կարծիքն լայն մտքի լիզացիայի յենթարկել այդ կարևորագույն լողունակի կիրառման համար, — ահա այն խնդիրը, վորը գրված է սոցիալիստական հասարակութեան ամեն մի ակտիվ կառուցողի առաջ:

Ինքնաքննադատութիւնն ու քննադատութիւնը Հայաստանում պետք է հակված լինեն, գլխավորապես, դեպի իդիոլոգիական պայքարի ճակատը:

Հարկավոր է կոմունիստական իդիոլոգիայի ոգտին պայքարի լայն ու բովանդակալից կամպանյա ծավալել: Պետք է ամրապնդել իդիոլոգիական ճակատի բոլոր բնագավառներն ու հենակետերը, ուժեղացնել կուսակցական անդրացութիւնն այնպիսի վայրերում, ինչպես որինակ՝ համալսարանը, կանոնավորել մամուլի ղեկավարութիւնը: Այս բոլոր խնդիրները պահպանում են տակավին իրենց թարմութիւնը:

Հայաստանի պայմաններում այդ տիպիկ մանրբուրժուական, գյուղացիական յերկրում, վորտեղ նաև մեզ գաղափարականապես անհարազատ ու թշնամական ինտելիգենցիայի մի բավական սովոր խավ գոյութիւն ունի, հեշտ գործ չի իրականացնել մեր մատնանշած խնդիրները: Մանրբուրժուական տարերքը չորս կողմից ճնշում է գործում կուսակցութեան վրա և կուսակցութեան օրգանիզմի առանձին բջիջները յենթարկվում են այդ ճնշմանը: Այդ տեսակետից պետք է սիստեմատիկ և համառ պայքար մղվի կուսակցութեան մեջ նկատվող ամեն մի գաղափարական տատանման և ճիշտ գծից շեղվելու յիրևայթի դեմ: Հատուկ ուշադրութիւն պետք է դարձնել յերեստասարգութեան համար մղվող պայքարի ճակատին,

առաջին հերթին ամրացնելով կոմսոմոլի ղեկավար մարմինները: Անոգուտ չի լինի, յեթե Հայաստանի կուսակցական կողմակերպութիւնները փոխադարձ հաղորդակցութեան մեջ գտնվեն Արբիջանի և Վրաստանի կազմակերպութիւնների և առաջին հերթին՝ պրոլետարական կազմակերպութիւնների հետ: Այդ գործը պետք է կազմակերպել նաև յիրտասարգութեան դժով: Ավելի մեծ չափով փոխադարձ կապ, փոխադարձ ինֆորմացիա, փոխադարձ հաճախումներ, աշխատանքի փորձի փոխանակում. — այդ ամենը կարող են մեծ չափով հեշտացնել Հայաստանի կոմունիստական կազմակերպութիւնների աշխատանքը:

Մեր պայմաններում ծավալել իդիոլոգիական ճակատում աշխատանք, այդ ամենից առաջ նշանակում է մասսաներին համարձակ ու վճռական կերպով պրոլետարական ինտերնացիոնալիզմի (միջազգայնութեան) վոգով դաստիարակել: Այդ խնդիրը կարելի չի իրագործել այն ժամանակ, յերբ կուսակցութիւնը հարկ յիղած բարձրութեան վրա կդնի իդիոլոգիական (և, իհարկե, վնջ միայն իդիոլոգիական!) պայքարը դաշնակնիքի և սպիցիֆիկների դեմ: Անցյալ տարիների ընթացքում այդ պայքարի թույլ լինելն իր կընիքը դրեց այն ամբողջ մեքենայի վրա, վորը հարկավոր է այսօր լիակատար գործադրութեան մեջ դնել և վորը նախանշանակված է իդիոլոգիական պայքարի ճակատի համար: Այդ մեքենայի առանձին մասերը ժանգոտել են: Մեխանիզմն ընդդիմադրութիւնն է ցուց տալիս: Այդ մեքենան դորժագրութեան մեջ չի կարելի դնել: Առանց համապատասխան վերանորոգման յենթարկելու նրան, նոր ղեկավարութիւնը պետք է ա-

մենայն փութաջանությամբ հաշվի առնի այդ հանգամանքը և ըստայնմ ուժերի համապատասխան դասավորութիւնն կատարի:

Ապարատը դուցե և ընդդիմադրի հետագայում: Նա տեղ-տեղ հագեցած է այնպիսի տարրերով, վորոնք համառորեն, զգուշ կերպով և հմտորեն աշխատում են նորից գեպի հետ քաշել, կաշկանդում են ստեղծագործականնախաձեռնութիւնը, ընդդիմադրում են իդիոլոգիական պայքարի ճակատում արված բոլոր ձեռնարկումներին: Այդ տարրերը, իսկ յերբեմն և ամբողջ ապարատը, գաղափարականապես գերի յեն վերցնում առսնձին՝ կոմունիստներին, և մեկ-մեկ ել հիմնարկութիւնների ղեկավարներին: Այդ կոմունիստները, հակառակ իրենց կամքի՝ նույնպես սկսում են ընդդիմադրութիւն ցույց տալ, պոչում են քաշ գալիս, և, փոխանակ կուսակցութեան գիծն անցկացնելու՝ խանգարում են. իսկ շատ անգամ ել վիժեցնում են այդ գիծը: Ահա թե ինչու ուժերի համապատասխան վերագասավորում է հարկավոր, լուրջ աշխատանք է հարկավոր կազմակերպելու այն կազրերին, վորոնք իդիոլոգիական ճակատ պետք է շարժուին: Այդ ճակատն ապահովիլ տոկուն աշխատողների կադրով, տալ նրանց կոնկրետ գիրեկտիվներ, ստուգման յենութարկել այդ գիրեկտիվների ի կատար ածումը, — ահա սա յե հաջող աշխատանքի առաջին և անհրաժեշտ պայմանը: Աշխատողների ընտրութեան մասին կենինը գրել է.

«Մեզ հարկավոր են վոչ թե նոր դեկրետներ, նոր հիմնարկներ, վոչ թե պայքարի նոր յեղանակներ: Մեզ հարկավոր է մարդկանց պիտանիութեան ստու-

ուգումը, փաստական իրագործման ստուգումը: Հետեվ-յալ դտումը պետք է լինի իրենց աղմինիստրատորներ համարող կոմունիստների վերաբերմամբ: Լնվ մաքրեցեք պրոպագանդիստական, ազիտատորական և ամեն մի այլ ոգտակար աշխատանքի բնագավառներն այն ամենից, վորոնք զբաղվում են բոլոր այդ կոմիսիաներով, խորհրդակցութիւններով և խոսակցութիւններով, իսկ մի հասարակ գործ անգամ չեն կատարում: Մի վորեւե հատուկ և իմաստուն բան են հորինում և արդարանում նրանով, վոր տնտեսական նոր քաղաքականութիւնն է և ուստի հարկավոր է վորեւե նոր բան հնարել: Իսկ այն գործը, վոր հանձնարարված է նրանց, չեն կատարում: Նրանք հոգ չեն տանում, վորպեսզի իրենց տված կոպեկը ինայն, չեն ջանում այդ կոպեկը դարձնել յերկուս, իսկ խորհրդային միլիոնների և բիլիոնների ծրագրեր են կազմում: Ահա այդ չարիքի դեմ մենք մեր պայքարն ենք վարում: Ստուգել մարդկանց և ստուգել գործի փաստական կատարումը, — ահա սրա մեջ է, նորից սրա մեջ է, միայն սրա մեջ այժմս մեր վողջ աշխատանքի, վողջ քաղաքականութեան մեխը: Այդ մի քանի ամիսների, մի տարվա գործ չի, այլ մի քանի տարվա գործ» (նույն տեղում՝ հատոր XVIII, մասն II, էջ 17):

Հայաստանում իդիոլոգիական ճակատի «աշխատանքի մեխը», կրկնում ենք մենք, հանդիսանում է մարդկանց ընտրութիւնը և գործի փաստական կատարման ստուգումը: Հարկավոր է վճռական հարված հասցնել թմրածութեանն ու որոմովչինային: Հարկավոր է իդիոլոգիական պայքարի կարևոր կետերում

աշխուժ, ճարտար և լըջմիտ մարդկանց նստեցնել: Նրանց՝ վորոնք վոչ միայն միջնադարյան յիկեղեցու ճաղատանս վոճի ուսումնասիրությամբ կզբաղվեն, այլ և ամենորյա պայքար կմղեն դաշնակների ու սպեցիֆիկների իդիոլոգիայի դեմ, ինչ ձևով և ինչ չափով ել վոր դա արտահայտվելու լինի: Պայքարը դաշնակների ու սպեցիֆիկների դեմ, նացիոնալիզմի և շովինիզմի դեմ, մասսաների այդ թշնամիների դեմ դաժան պայքար մղելու վոզով դաստիարակելը, ագիտացիայի և պրոպագանդայի սրգանների ամենորյա խորացրած ու բովանդակալից աշխատանքը, հրատարակչությունների և, մասնավորապես, պարբերական հրատարակչությունների այդ հիմունքով վերակազմելը, մասսայական մատչելի գրականության հրատարակումը, մասսաներին առանձին կոնկրետ որինակներով դաստիարակելն, — ահա այս բոլոր խնդիրներն իդիոլոգիական ճակատի կուսակցական ղեկավարության առավելագույն ուժեղացման և այդ ճակատում աշխատողների կադրիկազմակերպման ճանապարհով կարելի յե իրագործել:

Սրանք են հիմնականում այն խնդիրները, վորոնք դրված են Հայաստանի կոմկուսակցության առաջ: Հին ղեկավարության սխալների ու բացիրի դասերը պետք է հաշվի առնել, պետք է վճռականապես այդ սխալներն ուղղել, ղեկավարության շուրջը ներկուսակցական դեմոկրատիայի ու ինքնաքննադատության հիման վրա համախմբելով ու միաձուլելով կուսակցական ակտիվին և վողջ կուսակցությանը. պետք է լայն կերպով ծավալել մասսայական աշխատանքը և առաջին հերթին աշխատանքը գյուղում, ուժեղացնել

Հայաստանի ժողովրդական տնտեսական շինարարության կուսակցական ղեկավարությունը:

Սրանք են այն խնդիրները, վորոնք անկասկած կիրագործվեն Հայաստանի ղեկավար աշխատողների նոր կազմի կողմից՝ Հայաստանի վողջ կուսակցության աջակցությամբ: Անդրկովկասի կուսակցական և Սորհրդային ղեկավարող ակտիվի աջակցությամբ:



[Faint, illegible handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.]

11
11
11



ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

« Ազգային գրադարան



NL0186545

